ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՍՈԼԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք,
4-րդ թղմ. 1 հեռ. 098 17 11 86 էլ. փոստ solakgyuxapetaran@mail.ru

21.08.2015թ N 179

Ձեր ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլոյան

Ձեզ ենք ուղարկում Կոտայքի մարզի Սոլակ գյուղական համայնքի ղեկավարի հաշվետվությունը համայնքի բնակիչներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԴԱԼ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝
Քնարիկ Սուքիասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՍՈԼԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՍՈԼԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

— 2015Թ —

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոտայքի մարզի Սոլակ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

14.08.2015թ

գյուղ Սոլակ

2015թ օգոստոսի 14-ին տեղի ունեցավ նիստ, Սոլակ համայնքի բնակիչներին, հասարակական ներկայացուցիչներին իրազեկվեց տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին.

Մասնակիցներ՝ ավագանու անդամներ

1. Էդգար Խաչատրյանի
2. Սամվել Պետրոսյանի
3. Հենրիկ Հունանյանի
4. Սերոբ Կարապետյանի
5. Ռոման Դանիելյանի
6. Արտակ Ասատրյանի
7. Ֆիրդուս Բարսեղյանի

Գյուղապետարանի աշխատակազմից

1. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ժորա Մկրտչյանը
2. Աշխատակազմի քարտուղար Քնարիկ Սուքիասյանը
3. Առաջատար մասնագետ Գոհարիկ Հարությունյանը
4. Առաջին կարգի մասնագետ Կարինե Ստեփանյանը
5. Առաջին կարգի մասնագետ Ջուլիետտա Մխիթարյանը
6. Օպերատոր Անահիտ Հայրապետյանը

Համայնքի 95 բնակիչներ

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ

ՀՈԱԿ-ների տնօրեններ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին

2. Ներհամայնքային ճանապարհները բարեկարգելու և ասֆալտապատելու մասին

3. Խմելու ջրագծի վերակառուցման մասին

4. Արոտավայրերի ջրարբիացման մասին

5. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ

Համայնքի ղեկավար Բադալ Սարգսյանի հաշվետվությունը ֆինանսական, աշխատանքի և սոցիալական ծառայությունների, բնության և շրջակա միջավայրի պահպանման բնագավառներում կատարված աշխատանքների մասին

1. Ֆինանսական բնագավառ

Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Գոհարիկ Հարությունյանը զեկուցեց 2015թ բյուջեի կատարման ընթացքի մասին

	նախատեսվել է հավաքագրել	7 ամսում հավաքագրվել է.
Հողի հարկ	12 000 000 դրամ	3 037 400 դրամ
Գույքահարկ	4 671 400 դրամ	1 920 400 դրամ
Վարձակալական հողի վարձավճար	3 800 000 դրամ	968 100 դրամ

2. Աշխատանքի և սոցիալական ծառայությունների բնագավառ

Բնակիչների սոցիալական կարիքները հոգալու համար նախատեսվել է օգնության ֆոնդ 3 000 000 դրամ

Համայնքի ղեկավարի աշխատակազմում և ՀՈԱԿ-ներում աշխատում են 44 աշխատող:

Համայնքի բյուջեից նախատեսվել է 27 734 600 դրամ աշխատավարձի ֆոնդին:

3. Բնության և շրջակա միջավայրի պահպանման բնագավառ

Ներկայացվեց համայնքի փողոցները աղբից մաքրելու և աղբահանության աշխատանքների մասին

Նշվեց, որ համայնքի ամբողջ տարածքում շաբաթը մեկ կատարվում է աղբահանման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարը կոչ արեց ազգաբնակչությանը բարեխղճորեն վճարել բոլոր տեսակի հարկերը, որպեսզի ավելի շատ ծրագրեր իրականացվեն համայնքում:

Ե Լ Ո Ւ Յ Թ Ն Ե Ր

Ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ Ժորա Մկրտչյանը

Նա ներկայացրեց խմելու ջրագի վերակառուցման աշխատանքների ընթացքի մասին

Առաջարկվեց տեղյակ պահել թե որ ժամանակահատվածում որ փողոցում է կատարվելու շինարարական աշխատանքներ

Ներկայացրեց «Սոլակ համայնքի արոտօգտագործողների միավորման» կողմից խոտհունձի ժամանակ կատարված աշխատանքների մասին

Բնակչությունը հայտնեց իր գոհունակությունը «Սոլակ համայնքի արոտօգտագործողների միավորման» կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1. Համայնքի բնակիչները առաջարկեցին բարեկարգել և լուսավորել համայնքի փողոցները:

2. Կատարել համայնքի տարածքով անցնող սելավատարի մաքրման և վերանորոգման աշխատանքներ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՐԵՑ

1. Կատարվում են աշխատանքներ համայնքի փողոցները մասամբ ասֆալտապատելու և բարեկարգելու համար:

2. Ընթացքի մեջ է անասունների արոտավայրը ջրարբիացնելու ծրագիրը:

3. Նախատեսվում է ձեռք բերել ևս 2 խոտհնձիչ մեքենա և խոտհավաքիչ մամլիչ տրակտոր

ՈՐՈՇՎԵՑ

Առաջիկայում կատարել վերը նշված աշխատանքները:

Համայնքի ղեկավար՝ Բադալ Սարգսյան